

ՄԱՀ, ԹԵՂՈՒՄՆ ԵՒ ՄԵՌԵԼՈՅ.

Գանձակի դաւառի ժողովուրդն էլ հաւատում է ճակատագրին. նրա կարծիքով էլ մարդու օրհասը նախասահմանուած է և ոչ մի բան չի կարող փոփոխել այն: Մահուան հրեշտակը միշտ «Ժմբ ժանքին (երեկոյեան), «Հաւախօսին» (կէս գիշերին), «սրբ լին» (առաւօտ) շրջում է մարդկանց մէջ և ում օրհասը հասած լինի, ձեռի նիզակով խփում է նրան և նա անշուշտ մեռնում է:

Երբ սկսում է հողեւարքը, մահը դիւրացնելու համար վերցնում են մեռնողի դիւի տակից բալձը, բաց են անում պատուհանները:

Մեռած ըոպէին մինչդեռ տնեցիները լաց են լինում և ողբում, աւելի որտոտ և անտարբերները դիտում են մեռելին, եթէ աչքը բաց է մնացել, իսկոյն միքիչ հող են ածում վերան, տրորում և փակում, հաւատալով, որ նա աշխարհից կշտացած չէ եղել և միայն հողով կարող է կշտանալ: Յետոյ թաշկինակով կապում են կզակը, ձեռները խաչում կրծքին, ոտները կապում միմեանց հետ բամբակի թելով, փաթաթում մի կարպետի մէջ և վերան մի հաց դնում:

Քիչ յետոյ հրաւիրում են քահանային, որ դալով օրհնում է ննջեցեալին լողացնելու ջուրը, մխիթարում բոլորին և գնում: Իսկոյն՝ եթէ ննջեցեալը կին է՝ հարեւան կամ աղքատ կանայք, իսկ եթէ տղամարդ՝ ժամակոյժ և կամ մի այլ աղքատ մարդ կողիացնելով տան կամ բակի մի մասը կապերտներով՝ լողացնում են մեռելին: Նախ վերցնում են նրա կրծքին դրուած հացը, չորս կտոր անում և տալիս ուտելու նրանց, որոնք ցանկանում են որտապինդ լինել և ննջեցեալից չվախենալ: Ապա ննջեցեալին պառկեցնում են մի կամ երկու տախտակի վրայ, երեսը դարձնում դէպի արեւելք, ոտների մօտ մի փոս փորում, որ ջուրն այնտեղ թափուի, ապա գլխի և ոտների մօտ մի մի վառած մոմ կամ ճրագ դնում և ձեռներին փռած (քսակ) անցկացրած լողացնում են ննջեցեալին՝ շշնջալով.

Քարդ քաղած ընի,

Հողդ մաղած ընի.

Դատաստանդ քաղցր ընի.

Գնալի ճանապարհդ բարի ընի.

Աղօթքդ տանդ վրալ ընի.

Մնացածները բարի ընեն,

Դու էլ բարի մեռել ընիս,

Չմոռանան քե:

Եթէ օրհնուած ջրից աւելանում է, պաշում են, որ միւս օրը ննջեցեալի շորերը լուանալուց յետոյ այդ ջրով սրբեն իրենց ձեռքերը:

Թաղման օրը, երբ պատարագն սկսւում է, ննջեցեալի մօտ բարեկամները հաւաքւում են ննջեցեալի տունը և սգաւորների հետ գնում եկեղեցի:

Պատարագի միջոցին, երբ ողջոյն են տալիս, ննջեցեալին լողացնող, իսկ եթէ նա տղամարդ է՝ նրա պատանքը կարող կինը մօտենում է ննջեցեալին և աջ ձեռքը նրա գլխի աջ և ձախ կողմը դնելով ասում.

Աստուած ողորմի քե.

Քինալի հղիդ բարի ըլի.

Քարդ քաղած ըլի.

Հողդ մաղած ըլի.

Դատաստանդ քաղցր ըլի:

Ապա նոյն կինը ստանալով քահանայից մի նշխարհք և վարշամակը, դնում է նշխարհքը ննջեցեալի բերնին, իսկ վարշամակը նրա վերայ և ապա կարում պատանքի կրծքի և գլխի մասում թողած բացուածքը:

Սովորաբար փոքրահասակներին և աղքատներին միևնոյն օրը թաղում են, իսկ չափահասներին և հարուստներին պաշում են մի օր տանը կամ եկեղեցում և պատարագ մատուցանելուց յետոյ թաղում:

Այսպէս շուտ թաղելու պատճառով պատահում են դէպքեր, երբ ուշագնած եղածներն էլ թաղւում են և կամ թաղման ծէսը կատարելիս ուշքի գալիս: Այսպէս՝ Գետաշէնում Վարթի Բրուտեանը եկեղեցում, երբ կանայք վերան փաթա-

թուած լալիս էին, ուշքի է եկել, և դրանից լետոյ Հինգ տարի էլ ապրել: Նոյն գիւղում Գեօգալ Դալի-Մակունցը ուշքի է եկել, երբ պատանքել են:

Ննջեցեալին եկեղեցի տանելուց լետոյ ազգական և ծանօթ կանայք գալիս են սգաւորի տունը և տնեցիների հետ թաղման համար պատրաստութիւններ տեսնում: Մի եղ կամ մի ոչխար են մորթում և դրանից պատրաստում շիլաճաշ, կորկոտ և խաշու: Իսկ եթէ պատ է՝ լորի ճաշ և ձէթով շիլա *):

Այդ երեկոյին ընթրիք են տալիս քահանային, նրա տիրացուներին և միքանի մօտիկ ազգականներին: Ընթրիքից լետոյ քահանային չորս մոմ են տալիս, որ գիշերը սաղմոս ասի, իսկ առաւօտեան մի քիչ ալիւր, երկու մոմ և մի շիշ գինի են տանում նրա տունը՝ նշխարհք դործելու և պատարագ մատուցանելու համար:

Պատանքած մեռելը փաթաթում են մի կապերտի մէջ և դնում նաժի մէջ, իսկ շորեր հաղցրածի համար դադաղ են շինել տալիս և եթէ երիտասարդ է՝ կարմիր կամ ծիրանեգոյն, իսկ եթէ պառաւ՝ սև, կապուտ կամ կանաչ գոյնի կտոր քաշում վերան:

Տան մէջ թաղման կարգը կատարելուց լետոյ երբ նաժը կամ դադաղը վերցնում են, նրա տեղը քար են դնում, քաղաքում նաև գարի շաղ տալիս, որպէսզի ննջեցեալի լիշատակը այդ տան մէջ հաստատուն մնայ: Ննջեցեալը տղամարդ և կին լուղարկաւորողներով շրջապատուած տարւում է եկեղեցի. այս միջոցին քահանան զգուշանում է լետ նայելուց, «որպէս զի նոյն տնից մի ուրիշն էլ չմեռնի»:

Մեռելին լողացնելուց լետոյ նրա ականջների և քթածակների մէջ և աչքերի վրայ դնում են բամբակով փաթաթած խուռկ, իսկ բերանին մի նշխարհք, վերան վարշամակը, որ քահանան է կտրում, և բամբակ: Անանց կապում են պատանքի կտորից մի քիթկալ *) և մի Էշըղփի **)։ Երեխաների ձեռքը տալիս են մի մի մոմ, բաց նախ նրանցից մինը

*) Քաղաքում այս արդէն վերացել է:

**) **) Տէս Զգեստ և զարդ գլխում:

վառում են, յետոյ միւսը նրանից վառում, և ձեռքով Հանդցնում առաջինը, ապա կրկին վառում առաջինը, և Հանդցնում երկրորդը, յետոյ նորից վառում, երկուսը միմեանց մօտեցնում և միասին Հանդցնում:

Այս բոլորն անելուց յետոյ սպիտակ միտկալով պատանում են և նոյն կտորով մի գօտի և մի ~~հագուկ~~ կապում: Ուսկապը անց են կացնում պարանոցով, կրծքի վրայ խաչկապում և ծայրերը ամրացնում գօտում:

Պատանքից աւելացած կտորը կապում են սեանը, ասելով. «Աստուած ողորմի քե, քու մնացեալն ա»: Թաղման երկրորդ օրը նորից յետ են անում, դարձեալ «Աստուած ողորմի քե» ասելով և գործ ածում ինչի էլ կամենան:

Փոքր ինչ Հարուստները շորեր են Հագցնում մեռելին, բայց այս դէպքում էլ պատանքի կտորից սպիտակեղէն են կարում և Հագցնում: Վարշամակը պատանքի կտորից է լինում, վերան մոմ քսած. քահանան նրա մէջ տեղից խաչաձև կտրում է և Հինգ տեղ խնկի կտորներ կպցնում:

Երբ պատարագն աւարտում է և սկսում Թաղման կարգը, բարեկամ կանայք շրջապատում են ննջեցեալին և լալով ողբեր ասում: Այս գիւղերում ևս կան յայտնի լալկան կանայք, որոնք նստելով ննջեցեալի սնարի մօտ՝ ողբեր են երգում և լացացնում բոլորին: Ահա մի քանի նմուշներ այդ ողբերից.

Մ ա յ ր ւ ո ղ բ ու մ ե ո Ր Ղ ու ճ .

Քալասանի ծաղիկ, որդի ջան,	Իմ էօմբը մեռնի քե ըտենց
Խորասանի ծաղիկ, որդի ջան.	տեսնալաւ.
Ատամները ջաւահիր, որդի ջան,	Իմ աստղը ճկած որդի ջան,
Իմ խունջիկ մուկնջիկ, որդի ջան.	Իմ ծաղիկը ճլորած որդի ջան,
Մհեկ ետ իմ աչքերը խւարի քե	Իմ լեզին կրնցրած որդի ջան,
տեսնալաւ,	Իմ Թաղա մաղա որդի ջան.
Իմ կռները չրանայ քե պահելաւ.	

Ս կ ե ս ու լ ր ւ ո ղ բ ու մ ե հ ա Ր Ա ի ճ .

Ա՛յ իմ լիտիկ (լիբը) Հարսնը,	Ա՛յ իմ տղամարդ Հարսնը.
Ա՛յ իմ Թուգեան (դեր) Հարսնը,	Է՛ն կժին մատաղ, որ լցել ես, բե-
Ա՛յ իմ ռաշիդ (քաջ) Հարսնը,	րել,

Իմ տանը վեր գրեի,
 Իմ տունը կրո-մըս ջրջրհանել.
 Օրօրոցդ վեր ես գրեի
 Բեխիս ծիծ տուել,
 Տունը սարքել ես,
 Խմորի վրայ չոքել,

Բախան նի ես կապել
 Ընուշ քուն գրել.
 Քնացել թորոնը վառել,
 Եկել խմորը պիւլել.
 Եդ դառել հացը թխել.

ՀԱՐԱՐ ՈՂԲՈՒՄ Ե ՍԿԵՐՈՉՐ.

Իմ նանի,
 Իմ տանը սարգեար (սլաշտպան)
 նանի,
 Իմ տանը սլանի (բանալի) նանի,
 Իմ տաշտի մեղար (ճածկոց) նանի,
 Իմ դռան դուփուր (կողպէք) նանի.
 Ինձ թողել ես թռու ես քինում:
 Ես եկել եմ քո փեշք բռնել,
 Ըսում ես քու տղան ինձ կը պահի
 Էն վոնց կը պահի.

Տանը մե՛ծը քինայ,
 Ըհը քինայ, դողը քինայ,
 Ուրտեղ քինամ,
 Էնտեղ կը մնամ.
 Դուռը բաց կը մնայ,
 Տունը անտէր կմնայ.
 Հաւերը մոխիրը կը քանդեն,
 Ըները պուլերը (խմորի
 գունդ) կը տանեն:

Լալկան կանանց ողբերով չբաւականանալով՝ քահանային էլ ողբեր՝ զանձ են ասել տալիս և լետոյ բոլոր յուղարկաւորողները համբուրում են ջնջեցալի կրճքից և նրա վրայ դրուած ասիսէի մէջ դրամ ձգում, որը և պատկանում է քահանային իրր վարձատրութիւն զանձ ասելուն:

Ի վերջոյ ուժով հեռացնելով կանանց, ննջեցալի վերցնում են և չորս հոգի ձեռներին բռնած կամ ուսերին դրած տանում դէպի գերեզմանատուն:

Կանայք եկեղեցու դռանը միքիչ էլ լաց լինելուց լետոյ վերադառնում են ննջեցալի տունը, ուր միքիչ էլ լաց են լինում, ապա լուացուած և սպասում տղամարդ յուղարկաւորողներին:

Սրանք դադաղը վերցրած զնում են դէպի գերեզմանատուն, կէս ճանապարհին վալը դնում, կարգ կատարում, զանձ ասում, լոսհամբոյլ ձգում, ապա կրկին վերցնում և տանում զնում գերեզմանի աջ կողմը: Այստեղ մինչդեռ քահանան աղօթքներ է կարդում, երկու մարդ հանում են ննջեցալին կարպետի միջից և բռնելով նրա ոտներից ու ղլխից, իջեցնում

են գերեզմանի մէջ և թրխկալով ձգում մէջը: Այս միջոցին ուրիշ երկու հոգի բռնում են գերեզմանի վրայ ննջեցեալի երեսքաշը: Քաճանան մօտ ազգականի բռի մէջ օրհնում է մի քիչ հող և ձգել տալիս ննջեցեալի վրայ. միւս յուղարկաւորողներն էլ հետևում են նրան և մի մի բուռ հող ածելով ասում. «Աստուած ողորմի քե»: Ապա հողը տալիս են վերան, և մի թումբ ձևացնում: Թաղման կարգը վերջացնելուց յետոյ յուղարկաւորողները ձեռք են տալիս ննջեցեալի մօտիկ անձնաւորութիւններին և ասում. «Աստծանց մխիթալուես». յետոյ հրաւիրուելով՝ բոլորը գնում են ննջեցեալի տունը, ուր ձեռքերը լուանում և հացի են նստում: Երբ ուտում պրծնում են, բոլորը կանգնում են «ողորմաթասր» խմելու. նախ քահանան և ապա միւսները աւագութեան կարգով առնում են իրենց ձեռք մի վառած մոմ, և «Աստուած ողորմի ինչ պատարագսւմ չիշուել ա» ասելով մի բաժակ գինի խմում: Մոմը և բաժակը անցնում է ձեռքից ձեռք: Երբեմն էլ, մանաւանդ երբ ննջեցեալը կին է եղած, մոմի փոխարէն խնձոր են առնում ձեռքերը: Ողորմաթասր «ճրագով են խմում, որպէս զի հոգին լուսաւորուի»:

Ողորմաթասից յետոյ քահանան հոգեհանգիստ է կատարում և ապա յուղարկաւորողները տան դռան առաջը կանգնած մարդուց մի մի բաժակ գինի ընդունելով և բարեմախտութիւններ անելով խմում են և ցրւում:

Տղամարդկանցից յետոյ կանայքն են նստում ճաշելու, որոնք և նոյն կերպ խմում են ողորմաթասը:

Բանանց և միքանի ալլ գիւղերում, նոյն, թաղման օրը, գերեզմանի վրայ կրակ են վառում, որպէսզի «ննջեցեալի հոգին այն աշխարհում կրակի պէս իւր շուրջը լոյս սփռի»:

Թաղման յաջորդ օրը ազգական և բարեկամ կանայք զալիս են ննջեցեալի տուն. սրանցից մի քանիսը «սղբալատառ» են բերում, որ բաղկանում է մի շիշ օղուց, մի շիշ գինուց, հալուից, փլաւից և ալլն: Այստեղից սգաւոր տնեցիներին հետ գրնում են գերեզմանատուն, ուր զալիս են նաև տղամարդ բարեկամները՝ բերելով իրենց հետ օղի: Հրաւիրւում է քահանան,

որ կատարում է «Ինքսնահողի» կարգը: Կանայք շրջապատելով գերեզմանը լալիս են և բարձր ձայնով ողբեր ասում: Յետոյ նախ տղամարդիկ և ապա կանայք ողորմաթաս են խմում, նախապէս միքիչ օղի լցնելով գերեզմանի վրայ և վերադառնում տուն, ուր և հաց են ուտում:

Ութ օր շարունակ ննջեցեալի տան մէջ սուգ են պահում. կանայք գլուխները չեն լուանում, տղամարդիկ չեն սափրւում. կար չեն անում, ճախարակ չեն մանում: Այս ութ օրուայ ընթացքում գիշերները ննջեցեալը լողացրած տեղում ճրագ են վառում: Տղամարդիկ լաճախ դնում են եկեղեցի, ուր քահանայն անրիժք է կատարում ննջեցեալի համար. երբեմն էլ քահանային տուն են հրաւիրում ամբիժքը կատարելու և հիւրասիրում են նրան ընթրիքով:

Մահուան եօթներորդ օրը բարեկամ կանայք իրենց հետ վերցնելով մի մի կտոր սապոն՝ գալիս են ննջեցեալի տունը, լալիս, ողբում, յետոյ ջուր դնում տաքացնում և լողացնում սղաւորներին աւաղութեան կարգով՝ մխիթարելով նրանց «թէ ով կենայ» պարծենայ, լոխս էլ մեռնելական ենք»: Յետոյ այդ եկող կանայք լուանում են միայն իրենց գլուխները, որովհետեւ դրանք էլ սուգ պահելով՝ մինչև այդ ժամանակ ջուր չեն ածել գլխներին: Տղամարդիկ ևս լուանում են իրենց գլխները, որից յետոյ կանչում են սափրիչին և սափրել տալիս մորուքները: Ապա հաց են ուտում և ցրում իրենց տները:

Հետեւեալ օրը առաւօտեան բարեկամ կանայք և տղամարդիկ կրկին գալիս են սղատունը և այստեղից քահանայի հետ դնում գերեզմանատուն, լալիս, ողբեր ասում, կատարում «եօթնէից կարգը» և ապա վերադառնում, հաց ուտում և ցրում: Անուհետև սղաւորները սկսում են իրենց գործերին գնալ, մինչդեռ մինչև այդ օրը իրր սղաւոր անգործ են մնում:

Քառասունքին մի ոչխար են մորթում, առաւօտ շատ վաղ խաշու, շիւս և կաթնաճաշ եփում, բարձում ձիերի վրայ և տանում գերեզմանատուն: Այստեղ, գերեզմանի վրայ սփռոց են ձգում և հաց, գինի, օղի, պանիր, գաթայ, մեղր, հալուա և այլն շարում: Գալիս են բարեկամ կանայք և տղամարդիկ,

ինչպէս և քահանան: Կանաչ Զօքում են գերեզմանի շուրջը, լալիս և բարձր ձայնով ողբեր ասում. քահանան կատարում է քառասնէից կարգը. յետոյ սգաւորներից մինը զինի է ածում գերեզմանի վրայ և ապա մի մի բաժակ տալիս նախ տղամարդկանց և յետոյ կանանց, որոնք երկար բարեմախտութիւններ անելով խմում են և գերեզմանի վրայ դրուած ուտելիէններից մի քիչ ուտում: Ապա նստում են գերեզմանի կողքին և ճաշում, ուտելով տնից բերած ուտելիէնները: Տղամարդկանցից յետոյ ճաշում են կանաչ: Ի վերջոյ ճաշի մնացորդները թողնելով գերեզմանի վրայ և աւելացած խմիչքները ածելով գերեզմանի վրայ՝ վերադառնում են: Ձմեռը կամ վատ եղանակին միջիջ ուտելիէն և զինի առած գնում են գերեզմանը օրհնել տալիս և ապա վերադառնում տուն ճաշում:

Ննջեցեալի տարելցին «տրիպիւրի Հաց» են տալիս և պատարագ մատուցանում:

Գլխաւոր մեռելոցներին օրհնել են տալիս ննջեցեալներին:

Աւագ Ուրբաթ օրը զիւղի բոլոր տներից պատուայ կերակրներ են բերում եկեղեցի և կէսաւուր ժամասացութիւնից յետոյ երկար սփռոցներ սփռում եկեղեցու մէջ, այդ բերած կերակրները դարստում և ապա բոլոր տղամարդիկ նստում և ուտում են անխտիր այդ բերածները, որից յետոյ քահանան Հոգեհանգիստ է կատարում Համայն ննջեցելոց Համար:

ԳԵՐԵԶԻՄԱՆՆԵՐ.—Գիւղական գերեզմանատները սովորաբար գտնւում են զիւղին մօտ, ճանապարհների կշտին, որպէս զի անցուղարձ անողները ողորմիս տան ննջեցեալներին: Սովորաբար միւսնոյն գերեզմանի անդամները միմեանց մօտ են թաղւում: Կանոնաւորութիւն, ծառուղիներ բոլորովին չկան: Աղքատների գերեզմանների վրայ մանր քարեր են դարսուած լինում կամ հողակոյտ շինած, իսկ Հարուստներինը տապանաքարեր ձգուած: Սրանք ընդհանրապէս միակտուր, երկար, քառանկիւնի և կամ օրօրոցաձև քարեր են, նշխնով եզրափակուած և մէջտեղը տապանադրով ծածկուած:

Գիւղերում 10—25 բուբլի արժեցող տապանաքարեր շատ յաճախ են պատահում: